այն նպաստաւոր տրամադրութիւնը, որ կար Երևանի արհեստակցական միութիւնների որոշ մասերում, յատկապէս աւտո-դարաժի ծառայողների մէջ: Եւ թափորների ու ժողովների ընթացքում էլ փորձեր եղան տօնին տալ բոլշևիկեան բնոյթ, նոյնիսկ արտասանուեցին հակակառավարչական ճառեր, բայց, ընդհանուր առմամբ, ժողովուրդը մնաց անտարբեր հանդէպ բոլշևիկների ազմուկ-ժխորին: Պարզ էր, որ Երևանը բոլշևիկների հետ չէր, բայց անվիճելի էր նաև, որ բոլշևիկեան տարրերն ու տրամադրութիւնները այնքան էլ արհամարհելի չեն:

Գաւառում դէպքերը բոլորովին ուրիշ ընթացք ստացան:

Ցիշեցինք արդէն, որ Ալեքսանդրապոլը կազմում էր բոլշևիկների գործունէութեան կենտրոնը: Ապրիլի վերջերին այստեղ էին հաւաքւած նրանց գլխաւոր գործիչներն ու մարտական ուժերը՝ յեղաշրջում առաջ բերելու որոշումով: Մայիսի մէկին տեղի ունեցան բոլշևիկեան ուժեղ ցոյցեր: Ի միջի այլոց յարձակում գործուեց Դաշնակցութեան ակումբի վրա, պատերից փրցուեցին և ոտի տակ նետուեցին Քրիստափորի, Զաւարեանի և ուրիշների նկարները: Ո՛չ մի կողմից ո՛չ մի դիմադրութիւն: Տեղական իշխանութիւնը չեարած չքանում է. դաշնակցականները խուսափում են արիւնհեղութիւնից: Հրապարակը մնաց բոլշևիկներին: Հակապետական շարժման կենտրոն էր «Վարդան Զօրավար» գրահաղնացքը:

Լուրը Երևան հասնելուն պէս՝ զինուորական նախարարը կարգադրեց, որ «Վարդան Զօրավար»-ի պետ գլխապետ Մուսայէլեանը գնացքը առնելով՝ մեկնի Ղամարլուի ճակատը: Մուսայէլեանը ո՛չ միայն չկատարեց իր բարձրագոյն իշխանաւորի հրամանը, այլ և կարգադրեց, որ Ղամարլուի ճակատից անմիջապէս Ալեքսանդրապոլ մեկնի գրահապատ գնացքի մի մասը, որ պահպանում էր Հայաստանի սահմանները Վէդի-Բասարի թուրքերի դէմ:

Հրամանը կրկնուեց և սպարապետ զօր. Նազարբէգեանի կողմից, բայց Մուսայէլեանը նորից չենթարկուեց: Ընդհակառակը, գրահապատ գնացքի վրա բարձրացրեց բոլշևիկեան դրօշը, որից յետոյ նոյն Մուսայէլեանի նախագահութեամբ կազմուեց Հայաստանի Ռազմա-Յեղափոխական Կոմիտէ, որը յայտարարեց իրեն երկրի գերագոյն իշխանութիւնը: Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի մէջ դերերը բաժանուած էին հետևեալ ձևով. նախագահ և զինուորական կոմիսար՝ Մուսայէլեան, արտաքին գործերի կոմիսար՝ Ալիս Նուրիջանեան, ներքին գործերի կոմիսար՝ Արտաշէս Մելքոնեան: Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն բռնեց կայարանը, իր կողմը քաշեց տեղական զօրքի մի մասը և կարգեց երկաթուղային հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ:

Ապա՝ Մուսայէլեանը անմիջապէս ուղիղ հեռագրաթելով վերջնագիր ուղարկեց Երևան՝ պահանջելով, որ կառավարութիւնը իրեն յանձնի իշխանութիւնը: Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի անունից հեռագրեր տրուեցին Կարս, Սարըղամիշ, Ղարաքիլիսա և ուրիշ վայրեր, որոնցով յայտարարւում էր Հայաստանի խորհրդայնացումը և զինուորական ու քաղաքացիական իշխանութիւններին առաջարկւում էր ճանաչել նոր իշխանութիւնը: